



Արամյա Ճաթե Իզ Վոյսելմանկոմսո
ՄՈՒՆԻՐԱՅԻՆԻՆՏԵՆԻ
ԿԵՆՏՐՈՆԻ

Եթե ձեր սիրելին քայլելու ընթացքում անվստահություն է զգում ապա շարժունակության գործիքները կարող են նրան հանգստություն և ապահովություն տալ : Աջակցման գործիքները հետևյալն են: Ձեռնափայտը /single point cane, չորս ոտքանի ձեռնափայտ/quad canes և տարբեր տեսակի շարժանիվներ:

Օգտակարությունը:

Եթե աջակցման գործիքները տեղին օգտագործվեն -

- Կապահովվի հենման ավելացումը
- Կբարելավվի հավասարակշռությունը քայլելու ընթացքում
- Կնվազի ցավը
- Կավելանա վստահությունը
- Քայլելը կդարձնի ապահով
- Կոգնի ձեզ և ձեր սիրելիին ապրել անկախ

Ինչպես ընտրել աջակցման գործիքը:

Չնայած որ թվում է թե հեշտ է գնալ խանութ ու ձեռք բերել ձեռնափայտ կամ շարժանիվ,սակայն կարևոր է որ դա համապատասխանի տվյալ անձի կարիքներին: Խոսեք ձեր բժշկի կամ ֆիզիոթերապեվտի հետ որպեսզի ձեր կարիքներին համապատասխան ճիշտ ընտրություն կատարեք:Եթե դրանք ձեզ համապատասխան չեն կամ ճիշտ չեն օգտագործվում ապա կարող են անհարմար լինեն և նույնիսկ անապահով: Իսկ եթե դրանք ձեզ համապատասխան են և ճիշտ ձևով են օգտագործվում ապա այս գործիքները կարող են ձեզ տալ ապահովություն և օգնել ձեզ մնալու ակտիվ:

Հարցրեք ձեր բժշկական մասնագետներին
ինչ տեսակի աջակցման գործիքն է ձեզ հարկավոր

Համոզված եղեք ստանալու ճիշտ օգտագործման
ձեվի ցուցադրում

